Ամփոփ նյութ

«ՀՈԹԵԼ ՑԵՆՏՐԱԼ» ՍՊԸ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 833) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ՀՈԹԵԼ ՑԵՆՏՐԱԼ» ՍՊԸ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 833) փոխանակման կետի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ արժութային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:
Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՐՈՇՈՒՄ
18 ապրիլի 2024 թ. թիվ 1/139 Ա

«ՀՈԹԵԼ ՑԵՆՏՐԱԼ» ՍՊԸ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 833) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Սույն որոշման նկարագրական մասում նշված խախտումները թույլ տալու համար «ՀՈԹԵԼ ՑԵՆՏՐԱԼ» ՍՊԸ (լիցենզիա թիվ 833) Ա/Ձ փոխանակման կետի նկատմամբ կիրառել **նախազգուշացում՝ ապագայում նման խախտում թույլ չտալու հանձնարարականով:**

1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փոխանակման կետ մուտքագրվելու կամ Փոխանակման կետի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:

2. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ